ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 02 » մարտի 2017 թվականի N: 88-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 269-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետի 2017 թվականի փետրվարի 10-ի N 371, «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Շիրակի մարզի զարգացման ղեկավարի 2017 թվականի փետրվարի 16-ի թիվ OUT-537G և «Երիտասարդ կանանց քրիստոնեական ասոցիացիա «Ֆլորա» հասարակական կազմակերպության նախագահի 2017 թվականի հունվարի 26-ի գրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի տարածքային մակարդակում 2016 թվականի ապրիլի 27-ին կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի /Գյումրի-2/ անհատական կազմում Աննա Իգիթյանի և Արման Էլոյանի փոխարեն համապատասխանաբար ընդգրկել Սվետլանա Կարապետյանին և Ազատուհի Ֆարաջյանին:

2. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի

քաղաքի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների անհատական կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի N 465-Ա և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի N 466-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 269-Ա որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2017 թվականի
մարտի 2-ի N88-Ա որոշման

«Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2016 թվականի
հունիսի 30-ի N 269-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ /ԳՅՈՒՄՐԻ-2/

Էդվարդ Բաղրամյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի պետ.

Գևորգ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ.

Սվետլանա Կարապետյան- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ.

Հայկ Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թիվ 2 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի վիրաբույժ փորձագետ.

Գայանե Կարապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ.

Գուրգեն Տարախչյան - «Լիության տուն» համայնքային կենտրոն հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն.

Ազատուհի Ֆարաջյան - «Վորլդ Վիժն Ինթերնելշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գյումրու տարածքային ծրագրի ավագ սոցիալական աշխատող.

Մարզպետունի Զադոյան - «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ.

Վահե Թագվորյան - «Աջակից» բարեգործական հասարակական կազմակերպության փոխնախագահ.

Վիկտորիա Եղոյան - Երիտասարդ կանանց քրիստոնեական ասոցիացիա «Ֆլորա» հասարակական կազմակերպության անդամ.

Թերեզա Գրիգորյան - Ֆիզիկական անձ /քաղաք Գյումրի, Ղորղանյան փողոց, 190 տուն/:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽՈՍՐՈՎ ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝